



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՅԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

Ուրբաթ, 2 Օգոստոս.- Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 3 Օգոստոս.- Յիշատակ Տապանակին Հնոյ եւ Տօն Նորոյս Ս. Եկեղեցւոյ: Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Տաճատ Վրդ. Ծատուրեան:

Երեկոյեան, Վարդավառի Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Իրիկնադէմին Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ պաշտուեցան «Եկեցէի» եւ Հսկման արարողութիւնները: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 4 Օգոստոս.- Վարդավառ: Տօն Այլակերպութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Յետ Առաւօտեան ժամերգութեան կատարուեցաւ օրուան Անդաստանը: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Պատարագեց եւ քարոզեց Տ. Պարեա Մ. Վրդ. Երէցեան:

Երկուշաբթի, 5 Օգոստոս.- Յիշատակ մեռելոց: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց, ապա Միաբան Հայրեր մեկնեցան Ս. Փրկչի մատուռ, ուր Ս. Պատարագը մատուց Տ. Շնորհք Աբղ. Պալոյեան: Յաւարտ Ս. Պատարագի մատրան գաւիթին մէջ կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Ուրբաթ, 9 Օգոստոս.- Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 10 Օգոստոս.- Սրբոցն Թադէոսի Առաքելոյն մերոյ եւ Սանդիստոյ կուսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Կիրակի, 11 Օգոստոս.- Բ. Կիրակի զկնի Վարդավառի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց, ապա Միաբան Հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան: Յետ Ս. Պատարագի ձեռամբ Լուսարարապետ Սրբազան Հօր եւ առնթերակայ Հայր Սուրբերու կատարուեցաւ «Խաղողօրհնէք»-ի արարողութիւն, ապա օրհնուած խաղողը բաժնուեցաւ հաւատացեալներուն:

Երկուշաբթի, 12 Օգոստոս.- Սկիզբ Աստուածամօր Վերափոխման տօնը կանխող 14-օրեայ Ս. Պատարագներու:

Շաբաթ, 17 Օգոստոս.- Եփեսոսի Սուրբ Ժողովոյն երկու հարիւր հայրապետացն: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ: Օրուան Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատուց Տ. Աղան Աբղ. Գոգչեան:

Կիրակի, 18 Օգոստոս.- Գ. Կիրակի զկնի Վարդավառի: Գիշերային ժամեր-

գուլթիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց, ապա Միաբան Հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Ուրբաթ, 23 Օգոստոս.- Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 24 Օգոստոս.- Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Կէսօրէ ետք Լուսարարապետ Ս. Հօր գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանիի պարտէզ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու վերափոխման նախատօնակը:

Գիշերասկզբին, նոյն վայրին մէջ պաշտուեցան «Եկեսցէ»-ի եւ Հսկման ժամերգութիւնները: Հանդիսապետն էր Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 25 Օգոստոս.- Վերափոխումըն Ս. Աստուածածնի: Առաւօտուն Լուսարարապետ Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանիի պարտէզ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեւ քարոզեց, ապա «Անդաստան»-ի արարողութեան նախագահեց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Անդաստան»-ին եւ նախատօնակին նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 30 Օգոստոս.- Է. օր Վերափոխման: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Տաճատ Վրդ. Ծատուրեան:

Կիրակի, 1 Սեպտեմբեր.- Ը. օր Վերափոխման: Ըստ սովորութեան, Տեսչական Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան երաշխաւոր Ս. Աստուածածին մատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Ս. Յարութեան Տաճարի Տեսուչ՝ Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Երկուշաբթի, 2 Սեպտեմբեր.- Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Երեքշաբթի, 3 Սեպտեմբեր.- Սըրբոցն Յովակիմայ եւ Աննայի, ծնողաց Ս. Աստուածածնի եւ Կանանցն իւղաբերից: Ըստ սովորութեան Ս. Պատարագ մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Պատարագեց Տաճարին Տեսուչ՝ Տ. Հայրիկ Վրդ. Գալայճեան:

Շաբաթ, 7 Սեպտեմբեր.- Սրբոց Առաքելոցն Թովմայի, Յակոբայ եւ Շմաւոնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Շամարարն էր Տ. Շնորհք Աբղ. Պալոյեան:

Նոյն օրը երեկոյեան, նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 8 Սեպտեմբեր.- Գիւտ Գօտույ Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Պատարագեց Տ. Ներսէհ Աբղ. Աղոյեան: Ապա կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն երկու օրեր առաջ Տաճարի մաքրութեան մասնակցող բարեպաշտ տիկիներու եւ օրիորդներու հանգուցեալ պարագայից հոգիներուն համար: Արարողութեան աւարտին հոգե-

սուրճ տրուեցաւ տեսչարանին մէջ:

Շաբաթ, 14 Սեպտեմբեր.- Նիկիոյ Ս. Ժողովոյն երեք հայրիւր ութ եւ տասն հայրապետացն: Ս. Պատարագը մատուցեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Կիրակի, 15 Սեպտեմբեր.- Դ. Կիրակի զկնի Վերափոխման: Ս. Պատարագը մատուցեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Ուրբաթ, 20 Սեպտեմբեր.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 21 Սեպտեմբեր.- Ծնունդ Ս. Աստուածածնի: Առաւօտուն Լուսարարապետ Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանիի պարտէզ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց Գերաշնորհ Հանդիսապետ Սրբազան Հայրը:

Ս. Պատարագէն յետոյ կատարուեցաւ «Հանրապետական մաղթանք» Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան 28-ամեակին առիթով:

Կիրակի, 22 Սեպտեմբեր.- Ե. Կիրակի զկնի Վերափոխման: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան:

Շաբաթ, 28 Սեպտեմբեր.- Տօն եկեղեցւոյ ի նաւակատիս Ս. Խաչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Տաճատ Վրդ. Ծատուրեան:

Խաչվերացի մեծահանդէս նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Ամենա-

պատիւ Պատրիարք Սրբազան Հայրը, որ ապա Ս. Խաչափայտի մասունքը թափօրով Ս. Գլխադիրէն փոխադրեց Աւագ խորան:

Գիշերասկզբին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեցցէի» եւ «Հսկման» արարողութեանց նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան, որմէ յետոյ Վանքի Մեծ Բակին մէջ կատարուեցաւ խաչի մոմավառութիւն:

Կիրակի, 29 Սեպտեմբեր.- Տօն վերացման Սրբոյ Խաչին: Առաւօտեան կատարուեցաւ Ժամերգութիւն եւ «Անդաստան»: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ խորանին վրայ մատուցեց եւ քարոզեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կէսօրէ ետք, նախագահութեամբ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Խաչվերացի մեծահանդէս «Անդաստան»:

Երկուշաբթի, 30 Սեպտեմբեր.- Յիշատակ Մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Փրկիչ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Շաբաթ, 5 Հոկտեմբեր.- Տօն Խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Նշան վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Ներսէհ Աբղ. Աղոյեան:

Կիրակի, 6 Հոկտեմբեր.- Բ. Կիրակի զկնի Խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան:

Ուրբաթ, 11 Հոկտեմբեր.- Ս. Գէորգի նախատօնակը պաշտուեցաւ Ղպտոց Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 12 Հոկտեմբեր.- Սրբոյն Գէորգայ Զօրավարին, Ազդեցութիւն եւ Ռոմանոսի երգեցողին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ղպտոց Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Արարողու-

թեան աւարտին, Միաբանութիւնը հիւրասիրութեամբ ղապտոց վանքի տեսչէն:

Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սըրբազան Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր ժամերգութիւնն ու նախատօնակը պաշտօնեացան մեր վերնամատրան մէջ:

Կիրակի, 13 Հոկտեմբեր.– Տօն վարագայ Ս. Խաչին: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտօնեացան ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցեց Ս. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 19 Հոկտեմբեր.– Սրբոց եօթնասուն եւ երկու աշակերտացն Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի գաւթին մէջ գտնուող Ս. Գէորգայ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիրակի, 20 Հոկտեմբեր.– Դ. Կիրակի զկնի Խաչի: Կատարուեցաւ Ռամլէի Ս. Գէորգայ վանքի տարեկան ուխտագնացութիւնը, ի ներկայութեան Երուսաղէմի, Եփայի եւ Հայֆայի հայութեան: Ժամարարն էր Տ. Տիրան Արք. Յակոբեան:

Ուրբաթ, 25 Հոկտեմբեր.– Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Շաբաթ, 26 Հոկտեմբեր.– Ս. Թարգմանչաց Վարդապետացն մերոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ Աւագ Սեղանին վրայ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Տաճատ Վրդ. Ծատուրեան:

«Տէր ողորմեա»-էն վերջ Լուսարարապետ Ս. Հայրը նախագահեց Կիւլպէնկեան գերդաստանի անդամներուն համար կատարուած Հոգեհանգստեան կարգին:

Կիրակի, 27 Հոկտեմբեր.– Ե. Կիրակի զկնի Խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան: Ժամարարն էր Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Շաբաթ, 2 Նոյեմբեր.– Ս. Աւետարանչացն՝ Մատթէոսի, Մարկոսի, Լուկասու եւ Յովհաննու: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան գաւթը գտնուող հայոց Ս. Յովհաննէս Աւետարանչի մատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Ժամարարն էր Տ. Աղան Արք. Գոգչեան:

Կիրակի, 3 Նոյեմբեր.– Զ. Կիրակի զկնի Խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Դեռնդ Վրդ. Յովհաննիսեան:

Շաբաթ, 9 Նոյեմբեր.– Ս. Երկոտասան Վարդապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիսաղիր: Ժամարարն էր Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան:

Կէսօրէ ետք, Լուսարարապետ Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր ժամերգութիւնն ու նախատօնակը պաշտօնեացան Հայոց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Կիրակի, 10 Նոյեմբեր.– Է. Կիրակի զկնի Խաչի: Գիւտ Ս. Խաչի: Գիւտ Խաչ: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտօնեացան ի Ս. Յարութիւն, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Տիրան Արք. Յակոբեան: Ապա կատարուեցաւ մեծահանդէս թափօր, նախ Գիւտ Խաչի Այրը, ապա Ս. Գերեզմանին շուրջ եռադարձ թափօրով եւ մէկ անգամ Պատանատեղւոյն: Թափօրը գլխաւորեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան, ամպհովանիի տակ եւ Կենաց Փայտի մասունքն ի ձեռին: «Խաչի քո Քրիստոս» շարականի

երգեցողութենէն եւ խնկարկութենէն ետք, արարողութիւնները վերջացան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Այսպէս փակելով 2019 տարուան Ս. Յարութեան Տաճարի հանդիսութեանց շրջանը:

Շաբաթ, 16 Նոյեմբեր.- Ամենայն Սրբոց, հնոց եւ նորոց, յայտից եւ անյայտից: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Շնորհք Աբղ. Պալոյեան:

Կիրակի, 17 Նոյեմբեր.- Ը. Կիրակի զկնի խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Աւագ խորանին վըրայ: Ժամարարն էր Տ. Տաճատ Վրդ. Ծատուրեան:

Ուրբաթ, 22 Նոյեմբեր.- Նախատօնակին ի Սբ. Հրեշտակապետաց նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 23 Նոյեմբեր.- Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Սբ. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Սբ. Հրեշտակապետաց Վանքի Տեսուչ Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 24 Նոյեմբեր.- Թ. Կիրակի զկնի խաչի: Սբ. Պատարագը մատուցուեցաւ ի Սբ. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Ներսէս Աբղ. Ալոյեան:

Շաբաթ, 30 Նոյեմբեր.- Ս. Առաքելոցն Անդրէի եւ Փիլիպպոսի: Յետ Առաւօտեան ժամերգութեան, կատարուեցաւ ուխտագնացութիւն դէպի հայոց Փիլիպպոսի աղբիւր:

Կիրակի, 1 Դեկտեմբեր.- Ժ. Կիրակի զկնի խաչի: Սբ. Պատարագը մատուցուեցաւ ի Սբ. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան:

Երեքշաբթի, 3 Դեկտեմբեր.- Նախա-

տօնակին ի Սբ. Յակոբ նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Չորեքշաբթի, 4 Դեկտեմբեր.- Ընծայումն Սբ. Աստուածածնի: Առաւօտուն Լուսարարապետ Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանիի պարտէզ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէջեան:

Շաբաթ, 7 Դեկտեմբեր.- Ս. Գրիգորի Սբանչեւագործին, Նիկողայոսի Հայրապետին եւ Միւռոնայ Եպիսկոպոսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Սբ. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Յաւարտ Սբ. Պատարագի կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն 1988 թ. 7 Դեկտեմբերի երկրաշարժի զոհերու հոգիներուն համար:

Կիրակի, 8 Դեկտեմբեր.- Ա. Կիրակի Յիսնակաց: Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Ուրբաթ, 13 Դեկտեմբեր.- Նախատօնակին ի Սբ. Յակոբ նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 14 Դեկտեմբեր.- Սրբոց Առաքելոցն Թադէոսի եւ Բարթողիմէոսի: Պատարագը մատուցուեցաւ ի Սբ. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 15 Դեկտեմբեր.- Բ. Կիրակի Յիսնակաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Սբ. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան:

Շաբաթ, 21 Դեկտեմբեր.- Ս. Նիկողայոսի Սբանչեւագործին: Ս. Պատարագը

մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Մակարայ մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեան: Վերաբերումը կատարուեցաւ գաւթին մէջ գտնուող Ս. Նիկողայոսի Սեղանին վրայէն:

Նոյն օրը երեկոյեան նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Կիրակի, 22 Դեկտեմբեր.- Դ. Կիրակի Յիսնակաց: Յղութիւն Սբ. Աստուածածնի ի յԱննայէ: Գիշերային ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Սբ. Յակոբ, ապա Լուսարարապետ Սրբազան Հօր գըլխաւորութեամբ Միբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանիի պարտէզ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Սբ. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Սբ. Գերեզմանի վրայ օրուան հանդիսաւոր Սբ. Պատարագը մատուց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

23-26 Դեկտեմբեր.- Քառասնօրեայ խորհրդածութեան շրջանը ամբողջացնելէն անմիջապէս ետք, ըստ աւագութեան կարգի, Նորընծայ հոգեւորականներն իրենց անդրանիկ Պատարագը մատուցին Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ խորանին վրայ.

Երկուշաբթի, 23 Դեկտեմբեր.- Տ.

Արքակ Աբղ. Սարուխանեան:

Երեքշաբթի, 24 Դեկտեմբեր.- Տ.
Արշակ Աբղ. Ղազարեան:

Չորեքշաբթի, 25 Դեկտեմբեր.- Տ.
Արտակ Աբղ. Տիւշէն:

Հինգշաբթի, 26 Դեկտեմբեր.- Տ.
Արտէն Քհնյ. Աբրահամեան ի Ս. Գլխադիր:

Ուրբաթ, 27 Դեկտեմբեր.- Պատարագը մատուցուեցաւ Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ խորանին վրայ: Հնաւանդ սովորութեան համաձայն Պատարագը մատուց Նորընծաներուն ուսուցիչ՝ Տ. Ասպետ Վրդ. Պալեան, սպասարկութեամբ Նորընծայ հոգեւորականներուն:

Շաբաթ, 28 Դեկտեմբեր.- Ս. Յակոբայ Մծբնայ Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Տաճատ Վրդ. Ծատուրեան:

Կիրակի, 29 Դեկտեմբեր.- Դ. Կիրակի Յիսնակաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Պատարագեց Տ. Շնորհք Աբղ. Պալոյեան:



ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ



Ուրբաթ, 2 Օգոստոս.- Հայաստանի Կրթութեան, գիտութեան, մշակույթի եւ սպորտի նախարար՝ Տիար Արայիկ Յարութիւնեան այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Շաբաթ, 10 Օգոստոս.- Առաւօտեան ժամը 11-ին, Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանի աւագ գիտաշխատող, բանասիրական գիտութիւններու թեկնածու՝ Տիար Խաչիկ Յարութիւնեան այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Երեքշաբթի, 13 Օգոստոս.- Երուսաղէմի Ղպտի եկեղեցւոյ Եպիսկոպոս՝ Տ. Անպա Անտոնիոս ընկերակցութեամբ երկու միաբան եկեղեցականներու, այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպմանը ներկայ էին նաեւ Սուրբ Աթոռոյս Լուսարապետ Սրբազան Հայրը եւ Սրբատեղեաց պատասխանատուներ՝ Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան, Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան եւ Տ. Տիրան Աբղ. Յակոբեան: Քննարկուեցան սրբատեղեաց վերաբերող զանազան հարցեր:

Երեքշաբթի, 3 Սեպտեմբեր.- Առաւօտեան ժամը 11-ին, Հայաստանի մէջ Իսրայէլի դեսպան՝ Տիար Էլի Պէլոցեր-կովսկի եւ Իսրայէլի Արտաքին գործոց նախարարութեան կրօններու վարչութեան գլխաւոր քարտուղար՝ Տիար Օհատ

Շալեւ այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպման ընթացքին քննարկուեցան Պատրիարքարանին յուզող կարգ մը հարցեր:

Չորեքշաբթի, 4 Սեպտեմբեր.- Երուսաղէմի մէջ Լուսերականներու Պրոպատ Հայր Վոլֆկանկ Շմիթի պաշտօնավարման աւարտին առթիւ տրուած հրաժեշտի ընդունելութեան Ս. Աթոռոյս կողմէ ներկայ գտնուեցան Լուսարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան եւ Դիւանապետ՝ Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Երկուշաբթի, 9 Սեպտեմբեր.- Սուրբ Երկրի մէջ Պահայի համայնքի նոր առաջնորդի նշանակման առթիւ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Սուրբ Աթոռոյս Դիւանապետ՝ Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Հինգշաբթի, 12 Սեպտեմբեր.- Առաւօտեան ժամը 10-ին, Հայաստանէն բանաստեղծուհի, նկարիչ, հասարակական գործիչ եւ «Հայ մայրերու առաքելութիւն» ամսագրի խմբագիր՝ Տիկին Սվետլանա Յակոբեան այցելեց Պատրիարքարան, հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ եւ ստացաւ Նորին Ամենապատուութեան օրհնութիւնը:

Հինգշաբթի, 19 Սեպտեմբեր.- Իսրայէլի Արտաքին գործոց նախարարութեան կրօններու վարչութեան պետ՝ Տիար Ակիվա Տորօ այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպման ընթացքին քննարկուեցան Պա-

տըրիարքարանին յուզող կարգ մը հարցեր:

Երկուշաբթի, 23 Սեպտեմբեր.- «Ծագումով Հայեր» հաղորդաշարի հեղինակ եւ վարող Տիկին Մանանա Յակոբեան եւ ստեղծագործական խումբը՝ Արցախէն եւ Ֆրանսայէն, այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Նորին Ամենապատուութեան օրհնութիւնը:

Չորեքշաբթի, 25 Սեպտեմբեր.- Առաւօտեան ժամը 10-ին Պատրիարքարան այցելեց եւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ հանդիպում ունեցաւ Պրօֆ. Մայքըլ Սթօն:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 4-ին, Ամերիկայի Արեւմտեան Թեմէն Տ. Մեսրոպ Քհնյ. Աշ եւ Տ. Յովէլ Քհնյ. Օհանեան ուխաւորներու մեծ խումբով այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Նորին Ամենապատուութեան օրհնութիւնը:

Երեքշաբթի, 1 Հոկտեմբեր.- Առաւօտեան ժամը 10-ին, Պուլկարիայէն ուխաւորներ Տիար Օննիկ Փիլիպոսեանի առաջնորդութեամբ այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Չորեքշաբթի, 2 Հոկտեմբեր.- Կէսօրէ ետք ժամը 3-ին, Վատիկանի կողմէ Արեւելեան Եկեղեցիներու համակարգող պատասխանատու Կարտինալ Լեոնարտօ Քարտիի դիմաւորման արարողութեան Ս. Աթոռոյս կողմէ ներկայ գտնուեցան Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան, ընկերակցութեամբ՝ Աւագ Թարգման Տ. Տիրան Աբղ. Յակոբեանի: Կարտինալ Լեոնարտօ Քարտիի դիմաւորեցաւ Եաֆայի դրան առջեւ, ապա քրիստոնեայ երեք յարանուանութեանց ներկայացուցիչներու ուղեկցութեամբ թափօրով քալեցին դէպի Ս. Յարութեան Տաճար: Տաճարի մուտքին Կարտինալը դիմաւորուեցաւ Ս. Յարութեան Հայ, Յոյն եւ Ֆրանչիսկեան տեսուչներու կողմէ եւ առաջնորդուեցաւ դէպի Քրիստոսի Գերեզման:

Երկուշաբթի, 7 Հոկտեմբեր.- Առաւօտեան ժամը 11-ին, Ֆրանսայի նորանըշանակ Ընդհանուր Հիւպատոս՝ Տիար Ռենէ Թրոքազ կատարեց իր առաջին այցը Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Երեքշաբթի, 8 Հոկտեմբեր.- Առաւօտեան ժամը 11-ին, Հ. Մ. Լ. Մ. Երուսաղէմի մասնաճիւղի նորընտիր վարչութիւնը այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպման ընթացքին Հ.Մ.Լ.Մ. Երուսաղէմի մասնաճիւղի նորընտիր ատենապետ՝ Տիար Յարութ Պաղամեան Պատրիարք Սրբազան Հօր ներկայացուց միութեան վարչական կազմի անդամները, ապա Պատրիարք Սրբազան Հայրը շնորհաւորեց վարչականները եւ յաջողութիւն մաղթեց անոնց ապագայ ծրագիրներուն: Հանդիպման ընթացքին քննարկուեցան նաեւ միութեան եւ գաղութին յուզող կարգ մը հարցեր, ապա Պատրիարք Հօր ներկայացուեցաւ Քրիստոնեայ համալսարանի 5-րդ Երիտասարդական Ֆուտպոլի Մրցաշարի Հ.Մ.Լ.Մ. Երուսաղէմի նուաճած ախոյեանութեան գաւաթը:

Չորեքշաբթի, 16 Հոկտեմբեր.- Առաւօտեան ժամը 10:30-ին, Հայաստանէն Ս. Աթոռ ժամանած Օսմանագէտներ, Երեւանի Պետական Համալսարանի Դոցենտ՝ Տիկին Լուսինէ Սահակեան եւ Բանասիրական գիտութիւններու թեկնածու՝ Տիկին Անի Սարգսեան այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Յարգարժան Տիկնայք Ս. Աթոռ ժամանած են Յեղասպանութեան արխիւին մէջ իրենց աշխատանքները շարունակելու եւ արխիւներու ցուցակը վերջնական տեսքի բերելու նպատակով:

Շաբաթ, 26 Հոկտեմբեր.– Երեկոյեան ժամը 4-ին, Երուսաղէմի Հայ Երիտասարդաց Միութեան Վարչութիւնը եւ Երիտասարդուհեաց յանձնախումբը այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպման ընթացքին Ատենապետ՝ Տիար Սարգիս Ճոնազեան Պատրիարք Սրբազանի ներկայացուց միութեան վարչական կազմի անդամները եւ Երիտասարդուհեաց յանձնախումբի անդամուհիները, ապա Պատրիարք Սրբազան Հայրը շնորհաւորեց բոլոր ներկաները եւ յաջողութիւն մաղթեց անոնց ապագայ ծրագիրներուն: Հանդիպման ընթացքին քննարկուեցան նաեւ միութեան եւ գաղութին յուզող հարցեր:

Ուրբաթ, 1 Նոյեմբեր.– Երեկոյեան ժամը 4-ին Հայաստանէն՝ Հառիճավանքի վանահայր՝ Տ. Լեւոն Քհնյ. Յովհաննիսեան, Նոր Նորքի Սբ. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Տ. Աշոտ Քհնյ. Սաֆարեան եւ Ափսաղիոյ հոգեւոր հովիւ՝ Տ. Սեդրակ Քհնյ. Ազնաւուրեան ուխտաւորաց երկու խումբերով միասնաբար այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Երկուշաբթի, 4 Նոյեմբեր.– Իսրայէլի մէջ Հայաստանի Արտակարգ եւ Լիազօր դեսպան՝ Տիար Արմէն Սմբատեան այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպման ընթացքին քննարկուեցան Դեսպանատան եւ Պատրիարքարանի միջեւ համագործակցութեան վերաբերեալ հարցեր:

Ուրբաթ, 8 Նոյեմբեր.– Առաւօտեան ժամը 10:30-ին, Հայաստանէն՝ Կոտայքի թեմէն, Տ. Ժիրայր Քհնյ. Խաչատրեան ուխտաւորներու փոքրիկ խումբով այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Նորին

Ամենապատուութեան օրհնութիւնը:

Ուրբաթ, 15 Նոյեմբեր.– Առաւօտեան ժամը 11-ին, Իսրայէլի մէջ Վրաստանի դեսպան՝ Տիար Լաշա Ժվանիա, Փոխ-դեսպան՝ Տիար Պէկա Չխէիձէ եւ Հիւպատոս՝ Տիար Դաւիթ Չաչաւա այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Երեքշաբթի, 19 Նոյեմբեր.– Առաւօտեան ժամը 10-ին Աւստրիայէն Կրացի Կաթոլիկ եկեղեցւոյ թեմակալ առաջնորդ՝ Վիլհելմ Կռաուսթվաշլի եւ Pro Oriente կազմակերպութեան առաջնորդութեամբ ներկայացուցչական 15 հոգինոց խումբով մը այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Չորեքշաբթի, 20 Նոյեմբեր.– Ամերիկայի Գոհաբանական օրուայ առիթով Իսրայէլի մէջ Ամերիկայի Փոխ-դեսպանին կողմէ տրուած ընդունելութեան Սուրբ Աթոռոյս կողմէ ներկայ գտնուեցան Աւագ Թարգման՝ Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան եւ Դիւանապետ՝ Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան:

Հինգշաբթի, 28 Նոյեմբեր.– Երիբովի եւ Բեթղէհէմի զինուորապետները այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպման ընթացքին քննարկուեցաւ Յօդանան գետի ափին գտնուող հայկական կալուածի վերաբերեալ Պատրիարքարանի խնդրագրի հարցը: Զինուորապետները վստահեցուցին որ այդ հարցը դրական առաջընթացի մէջ է:

Նոյն օրը երեկոյեան, ի ներկայութեան Վանքին մեծ բակին մէջ խոնուած բազմութեան, Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը լուսաւորեց առաջին անգամ Մեծ Բակին մէջ զետեղուած Կաղանդի Ծառը:

Հինգշաբթի, 28 Նոյեմբեր.– Հայերէն առաջին պարբերականի՝ «Ազգարար»-ի տպագրութեան 225-ամեակին առիթով Հայաստանի Ազգային Գրադարանի մէջ կազմակերպուած «Հայ մամուլի դերը ազգային արժեհամակարգի ձեւաւորման եւ պահպանման գործում, ընտանիք, հայրենիք, եկեղեցի» խորագիրը կրող գիտաժողովին Սուրբ Աթոռոյս կողմէ ներկայ գտնուեցաւ Պատրիարքութեան «Սիոն» պաշտօնաթերթի գլխաւոր խմբագիր՝ Տ. Ներսէս Աբղ. Ալոյեան:

Գիտաժողովի երրորդ նիստի ընթացքին Հայր Սուրբը հանդէս եկաւ «Սիոն» պաշտօնաթերթը հայ պարբերական մամուլի համապատկերում» զեկոյցով:

Զեկուցաբերներու կողմէ անդրադարձներ եղան նաեւ հայապահպանութեան գործին մէջ Երուսաղէմի կաթողիկոսի:

Ուրբաթ, 29 Նոյեմբեր.– Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ միաբան հայրերու, ներկայ գտնուեցաւ Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ. սրահին մէջ տեղի ունեցած Հ.Օ.Մ.-ի Սուրբ Ծննդեան տարեկան պաշարին:

Պաշարին բացումը կատարեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը:

Երկուշաբթի, 2 Դեկտեմբեր.– Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան, ընկերակցութեամբ Դիւանապետ՝ Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեանի ներկայ գտնուեցան Երուսաղէմի Նոթր Տամ պանդոկին մէջ տեղի ունեցած «Իսրայէլի Կրօնական Պետերու Խորհուրդ»-ի ամենամեայ 11-րդ հանդիպմանը: Հանդիպման ընթացքին ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Իսրայէլի «Հասարակական հաւասարութեան» նախարարուհի՝ Տիկին Կիլա Կամլիէլ: Քննարկման թեման «Կանանց դէմ գործադրուող բռնութիւնն» էր: Այս առթիւ ստորագրուեցաւ նաեւ յատուկ յայտարարութիւն:

Երեքշաբթի, 3 Դեկտեմբեր.– Երիբովի

զինուորապետին հետ Քրիստոնեայ համայնքներու ներկայացուցիչներու հանդիպմանը ներկայ գտնուեցաւ Սուրբ Աթոռոյս Դիւանապետ՝ Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Ուրբաթ, 6 Դեկտեմբեր.– Կէսօրէ ետք ժամը 4-ին տեղի ունեցաւ Երուսաղէմի Հայ Երիտասարդաց Միութեան (Հ.Ե.Մ.) Սուրբ Ծննդեան տարեկան պաշարը:

Բացման առարողութիւնը կատարեց Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Տարեկան այս պաշարին հայերէն զատ մասնակցեցան նաեւ այլ Քրիստոնեաներ եւ Հրեաներ:

Երկուշաբթի, 16 Դեկտեմբեր.– Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներու առիթով Բեթղէհէմի Զինուորապետին կողմէ կազմակերպուած քրիստոնեայ համայնքներու հետ հանդիպմանը Սուրբ Աթոռոյս կողմէ ներկայ գտնուեցաւ Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան, ընկերակցութեամբ Աւագ Թարգման՝ Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեանի եւ Ս. Ծննդեան Տաճարի Տեսուչ՝ Տ. Ասպետ Վրդ. Պալեանին:

Երեքշաբթի, 17 Դեկտեմբեր.– Հռոմի Սրբազան Քահանայապետի ծննդեան 83-ամեակին առիթով կազմակերպուած հիւրասիրութեան ներկայ գտնուեցաւ Ս. Աթոռոյս Աւագ Թարգման՝ Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան, ընկերակցութեամբ Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեանի:

Նոյն օրը երեկոյեան, Իսրայէլի Զբօսաշրջութեան նախարարին կողմէ Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներու առիթով կազմակերպուած ամենամեայ հիւրասիրութեան ներկայ գտնուեցաւ Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան, ընկերակցութեամբ Աւագ Թարգման՝ Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեանի եւ Տ. Աղան Աբղ. Գոգչեանի: Հիւրասիրութեան ընթացքին Տ. Աղան Աբղ. Գոգչեան ներկաներուն փոխանցեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր պատգամը:

Երեքշաբթի, 17 Դեկտեմբեր.- Պէյթ-Հանինայի մէջ կազմակերպուած Միջեկեղեցական Քրիստոնէական ընթրիքին ներկայ գտնուեցաւ Աւագ Թարգման՝ Տ. Ղեւոն Վրդ. Յովհաննիսեան, ընկերակցութեամբ՝ Տ. Աղան Աբղ. Գոգչեանի, Յովհաննէս Սրկ. Պետրոսեանի եւ Արթուր Սրկ. Վարդանեանի:

Երկուշաբթի, 30 Դեկտեմբեր.- Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներու առիթով Իսրայէլի նախագահ Վսեմաշուք Տիար Ռուվէն Ռիվլինի կողմէ կազմակերպուած ընդունելութեան Ս. Աթոռոյս կողմէ ներկայ գտնուեցաւ Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան, ընկերակցութեամբ Աւագ Թարգման՝ Տ. Ղեւոնդ Վարդապետ Յովհաննիսեանի եւ Դիւա-

նապետ՝ Տ. Կորին Վարդապետ Բաղդասարեանի: Իր խօսքին մէջ Նորին Վսեմութիւնը շնորհաւորեց Սուրբ Երկրի բոլոր քրիստոնեայ համայնքներու հոգեւոր պետերուն Նոր Տարուան եւ Սուրբ Ծնունդի զոյգ տօներուն առիթով:

Երեքշաբթի, 31 Դեկտեմբեր.- Երուսաղէմի մէջ Մեծ Բրիտանիոյ Ընդհանուր Հիւպատոս՝ Տիար Ֆիլիպ Հոլ այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի հետ: Հանդիպման ընթացքին քննարկուեցան Արքայազն Չարլզի Սուրբ Երկիր կատարելիք այցի կազմակերպման մանրամասնութիւններ:

